

**ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՎԱՆԵՍՈՎ ԷՌՆԵՍՏ ՅՈՒՐԻԻ

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ**

**ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությանք մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

**Ատենախոսության թեման հաստատված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտում**

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր՝ Ա.Ա. Չատինյան

Պաշտոնական ընդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր՝ Ֆ.Գ. Ղազարյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու՝ Բ.Լ. Երիցյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ. Բյուրովի անվան
լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. նոյեմբերի 14–
ին ժամը 14⁰⁰-ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈՆ-ի մանկավարժության 065
մասնագիտական խորհրդում:

Դասընթաց՝ 0025, ք. Երևան, Արովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության
ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 14-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ՝

Ա.Փ. Ղազարյան

ԱՏԵՍԱԽՈՍՈՒԹՅԱՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աճող սերնդի ֆիզիկական պատրաստության հիմնախնդիրը մշտապես գտնվել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Այսօր նույնպես այն արդիական է և պայմանավորված է կարևոր հանգամանքներով: Նախ և առաջ նախադպրոցական ու դպրոցական տարիքում է ձևավորվում մարդու շարժողական պատրաստության և առողջության հիմքը: Միևնույն ժամանակ մասնագետներն ահազանգում են, որ տարիեցտարի նկատվում է այդ տարիքային խնբերի երեխաների շարժողական պատրաստականության ու առողջական վիճակի վատրացում:

Ներկայում դպրոցականների շրջանում առկա է առողջական շեղումներով երեխաների ավելացող թիվը, որոնցից շատերն ընդգրկված են հատուկ բժշկական խմբերում [Ֆ.Գ. Ղազարյան, 2007; Տ.Ռ. Աճեսեա, Լ.Վ. Բինոգրածով, 2006 և այլք]: Ուսանելու տարիներին նճան աշակերտները հաճախ են տառապում տարբեր հիվանդություններով [Ի.Ի. Աճրամովա, 2010]:

Պարզվում է, որ դպրոցահասակ հայ երեխաների շարժողական պատրաստականության ու առողջական վիճակը գտնվում է ցածր նակարդակի վրա [Դ.Ս. Խիթրայան, 2004; Ա.Պ. Մարտիրոսյան, 2006; Ֆ.Գ. Ղազարյան, 2008; Հ.Ռ. Տեր-Մարգարյան, 2007 և այլք]: Դրա հետ մեկտեղ ներկայում հայաստանի դպրոցականների մեծամասնությունը չունի դպրոցից դուրս ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու կամ պարզապես առօրյա կյանքում ֆիզիկապես ակտիվ լինելու ցանկություն: Չնայած վերջին տարիներին ֆիզիկական կուլտուրայի դասերի քանակի ավելացմանը՝ այնուամենայնիվ դրանով չի ապահովվել դասերի արդյունավետության բարձրացումը: Այսօր ցածր է դասերի հանդեպ հետաքրքրությունն ու կայուն դրական դրդապատճառները, հատկապես կապված միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների հետ: Որպես դրա ապացույց՝ առկա են երեխաների ֆիզիկական պատրաստականության ցածր նակարդակը և հիվանդանալու հաճախականության մեծացման փաստեր:

Հաշվի առնելով բակալավրին խաղերում դպրոցահասակ երեխաների ներգրավվածության ցածր աստիճանը, ինչպես նաև սպորտով զբաղվելու հանրեպնացն հետաքրքրվածության ցածր մակարդակը՝ ենթադրվում է, որ դպրոցականների շարժողական ակտիվիտերյան պակասի լրացնան անհրաժեշտություն կա: Իսկ այդ բացը պետք է լրացվի առավելապես դպրոցի ֆիզիկական կուլտուրայի դասերի միջոցով: Սակայն դպրոցահասակ երեխաների շրջանում արձանագրված վատրարացող շարժողական պատրաստականության արդյունքների հիմնական պատճառը հավանաբար կապված է այդ դասերի բովանդակային ու կազմակերպական կողմերի հետ:

Մեր երկրում մինչ օրս տվյալ լուծման ուղղությամբ մի շարք փորձեր են կատարվել [Ռ.Ս. Մելիքսերյան, 2001; Ռ.Գ. Պապյան, Ս.Լ. Սարևոսյան, 2002; Վ.Ա. Ասատրյան, 2006, 2011, 2012; Ա. Ստեփանյան, Հ. Գաբրիելյան, 2011 և այլք], սակայն այս հիմնախնդիրը դեռևս լիարժեք լուծում չի ստացել: Դրա հետ մեկտեղ որոշ մասնագետների հավաստմամբ աճող օրգանիզմին շաբաթական պահանջում է 10–14 ժամ շարժողական ակտիվություն, որը սակայն հայտնի պատճառներով հանրակրթական համակարգում հնարավոր չէ կազմակերպել [Ի.Ռ. Սկաչկով, 1993; Վ.Պ. Լուկյանենկո, 2012 և այլք]:

Երևան քաղաքի դպրոցներում ֆիզիկական կուլտուրայի դասերին մեծավագ-մասամբ հաճույքով չեն հաճախում 12–13 տարեկան դպրոցականները [Վ.Ա. Ասա-տրյան, 2012]: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնուրույն առավոտ-յան մարմնամարզությամբ պարապող նշված տարիքի երեխանների թիվը կազմում է ընդամենը 14–15% [Ա.Ա. Չատինյան, Մ.Ա. Ուռյան, 2009 և այլք], առավել ար-դիական է դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակում այդ տա-րիքի աշակերտների շարժողական պատրաստության նոր կազմակերպական ձևերի որոնումը և դրանց արդյունավետության բացահայտումը:

Դպրոցականների առողջության վատթարացման պատճառների շարքում առանձնացվում են չափից մեծ ուսումնական բեռնվածությունը, շարժողական ակտիվության պակասը և այլն [Բ.Ը. Պլոտնիկովա, 2012]: Դպրոցականների շրջա-նում ֆիզիկական պատրաստականության մակարդակի վատթարացման մասին վկայում են բազմաթիվ հետազոտությունների արդյունքները, որոնք կապված են հետխորհրդային գրեթե բոլոր պետությունների հետ:

Հայրենական և արտասահմանյան մասնագետները տվյալ խնդրի լուծումը հատկապես փոխակերպվող հասարակության պայմաններում կապում են դպրո-ցականների ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման (մարզականաց-ման) հետ: Ըստ հեղինակների այս մոտեցմանը հնարավոր է ոչ միայն զգալիորեն բարելավել դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մակարդակը, այլև արմատապես փոխել երեխանների վերաբերմունքը ֆիզիկական դաստիարա-կության հանդեպ [Ռ.Գ. Պապյան, Ս.Լ. Սաքնոսյան, 2002; Յ.Կ. Բալյսևիչ, 2006; Լ.Ի. Լյոնաշևա, 2006; Դ.Բ. Փոհարև, 2007 և այլք]:

Սակայն հարկ է նշել, որ գիտականորեն հիմնավորված, գործնականում փորձարկված սպորտայնացված դասերի մեթոդիկա հայրենական գրական աղ-բյուրների ուսումնասիրման արդյունքում մենք չենք հանդիպել:

Այս ամենը մատնանշում է սույն հետազոտության արդիականությունը, հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունն ու գործնական նշանակությունը:

Աշխատանքի նպատակը: Բացահայտել ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակում 12–13 տարեկան դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկայի ներգործության առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակի իրականաց-ման համար առաջադրվել են հետևյալ խնդիրներ՝

1. Ուսումնասիրել դպրոցահասակ երեխանների նորֆոֆունկցիոնալ փոփոխու-թյունների, շարժողական ընդունակությունների տարիքային զարգացման և մշակման, դպրոցում ֆիզիկական դաստիարակության կազմակերպման նոր ուղղությունների տեսական հայեցակետերը:
2. Պարզաբանել ֆիզիկական կուլտուրայի ճանագետների և դպրոցականների կարծիքները դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի ներկա վիճակի ու դրանց արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիների վերա-բերյալ:
3. Մշակել և գիտափորձերով հիմնավորել 12–13 տարեկան երկու սերի դպրոցա-կանների նախընտրած վոլեյբոլ և բասկետբոլ մարզաձևերի վրա հիմնված շարժողական պատրաստության մեթոդիկայի արդյունավետությունը:
4. Պարզաբանել դպրոցականների մարզական ուղղվածության դասերի ֆիզի-լոգիական ներգործության առանձնահատկությունները:

5. Բացահայտել դպրոցականների տարբեր անհատական բնութագրերի փոփոխությունը վոլեյբոլի և բասկետբոլի ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպման արդյունքում ու դրանց ազդեցությունը նրանց առողջական վիճակի վրա:
6. Պարզաբանել ֆիզիկական դաստիարակության պարապմունքներից սպորտայնացված ավանդական դասերին անցնելու դեպքում դպրոցականների շարժողական պատրաստականության փոփոխության առանձնահատկությունները:

Գիտական վարկածը: Ենթադրվում էր, որ, ի համեմատ ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերի, 12–13 տարեկան երկու սերի աշակերտների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկայի կիրառումը հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիարակության գործընթացում ավելի մեծ ներգործություն կունենա երեխաների շարժողական պատրաստության, առողջական վիճակի, ինչպես նաև տարբեր անհատական բնութագրերի բարելավման վրա՝ նպատակավորացնելուն, պարտաճանաչություն, տրամաբանական մտածողություն և այլն:

Դետագուտության օբյեկտ: Ի հանդիսացել ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակում 12–13 տարեկան դպրոցականների շարժողական պատրաստության գործընթացը:

Դետագուտության առարկա: Է հանդիսացել 12–13 տարեկան երկու սերի դպրոցահասակ երեխաների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկան՝ հիմնված վոլեյբոլ և բասկետբոլ մարզախաղերի պարապմունքների կազմակերպման վրա:

Դետագուտության մեթոդները: Առաջադրված խմբիների լուծման համար օգտագործել ենք հետազոտության հետևյալ մեթոդները՝ գրական աղբյուրների ուսումնամասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, ուսումնական փաստաթղթերի և ծրագրերի ուսումնամասիրում, անկետային հարցում, գրույց, մանկավարժական դիտումներ, մանկավարժական թեստավորում, դինամոմետրիա, պուլսումետրիա, մանկավարժական գիտափորձ, մաթեմատիկական վիճակագրություն:

Դետագուտության կազմակերպումն ու քանակակազմը: Դետագուտությունն իրականացվել է 5 փուլով: Անկետային հարցումներում մասնակցել են՝ ֆիզիկական կուլտուրայի և այլ առարկաների 65 ուսուցիչ, ֆիզիկական կուլտուրայի 38 մեթոդիստ, 5–11–րդ դասարանների շուրջ 500 դպրոցական, ինչպես նաև հետազոտվող աշակերտների 85 ծնող: Դաստանող մանկավարժական գիտափորձներում մասնակցել են երկու սերի 58, իսկ ծնավորող մանկավարժական գիտափորձներում՝ 130 դպրոցական:

Դետագուտության ընթացքում ընդհանուր առմամբ անց է կացվել 8500 չափում:

Դետագուտության գիտական նորույթը: Մշակվել է դպրոցի ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացված դասերի կազմակերպման մեթոդիկա՝ վոլեյբոլի և բասկետբոլի կիրառմանը:

Առաջին անգամ Հայաստանում ուսումնամասիրվել են դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակում աշակերտների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիստները՝ 12–13 տարեկան երկու սերի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության, ինչպես նաև նրանց առողջության վրա: Միևնույն ժամանակ բացա-

հայտվել է դասերի նման կազմակերպման արդյունքում տարբեր անհատական բնութագրերի (կարգապահություն, կանք, ընկերասիրություն, կոնֆլիկտայնություն և այլն) բարելավման հնարավորությունը: Պարզաբանվել է ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացված դասերի ընթացքում նոր մեթոդիկայի կիրառման ժամանակ բեռնվածության դրական ներգործությունը երեխաների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա:

Նետազոտության տեսակամ նշանակությունը: Աշխատանքի տեսակամ նշանակությունը պայմանավորված է ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում դպրոցականների մարզական ուղղվածության ֆիզիկական պատրաստության տեսական դրույթների հստակեցմանը: Մասնավորապես՝

1. մշակվել են դպրոցականների սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացի տարեկան թեմատիկ պլան-գրաֆիկներ,
2. բացահայտվել է վոլեյբոլի և բասկետբոլի ուղղվածությանը ֆիզիկական կուլտուրայի դասերի համեմատական արդյունավետությունը դպրոցականների շարժողական ընդունակությունների զարգացման, առողջական վիճակի և տարբեր անհատական բնութագրերի վրա:

Նետազոտության գործնակամ նշանակությունը: Նետազոտության արդյունքների գործնական նշանակությունն որոշվում է դպրոցական ֆիզիկական դաստիարակության գործընթացում մարզական պատրաստության տարրերի ներդրման նոր մեթոդիկայով, որը թույլ է տալիս էականորեն բարձրացնել դպրոցականների շարժողական պատրաստականության մակարդակը: Տվյալ մոտեցման կիրառումը 12–13 տարեկան դպրոցականների շրջանում նպաստում է նրանց տարբեր անհատական բնութագրերի բարելավմանը: Միևնույն ժամանակ սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացում կիրառվող բեռնվածությունը դրականնորեն է ներգործում աշակերտների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա, որի արդյունքում բարելավվում է նաև նրանց առողջական վիճակը:

Նետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են մանկավարժական գիտության հետևյալ սկզբունքները՝ դաստիարակության՝ մարդասիրական ուղղվածության, անհատական առանձնահատկությունների հաշվառման, ուսուցման՝ մատչելիության, համակարգվածության և հաջորդականության [Յու.Կ. Բարանսկի, 1986, 1987; Ի.Պ. Պոձլասով, 1996; Հ.Բ. Բորдовսկայ, Ա.Ա. Պեահ, 2000 և այլք], ֆիզիկական դաստիարակության ու սպորտի տեսության ֆիզիկական ներգործության շարունակականության, բեռնվածության և հաճախտի հերթագայության, զարգացնող ու մարգումային ազդեցությունների աստիճանական մեծացման [Ֆ.Գ. Ղազարյան, 1981, 2007; Վ.Պ. Փիլին, 1972, 1999; Վ.Վ. Բելօրուսովա, 1974; Ա.Ա. Ղյալովսկի, 1978; Ա.Ա. Տեր-Օվանեսյան, Ի.Ա. Տեր-Օվանեսյան, 1986; Լ.Պ. Մատվեև, 1991; Հ.Ա. Փոմին, Յ.Ն. Վավիլով, 1991 և այլք], ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման տեսության՝ մարզաձևի կամընտրական մոտեցման, մարզական կողմնորոշման հնարավորության, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի նկատմամբ դրդապատճառային ոլորտի ձևավորման հիմնական դրույթները [Վ.Կ. Բալյեսևիչ, 1993, 1996; Լ.Ի. Լունչևա, 2004, 2006, 2010; Լ.Ի. Պրոցոնյոկ, 1998; Վ.Կ. Սուրյան, 2007 և այլք]:

Նետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է հետազոտվող բանակակազմի բավականաչափ ծավալով, առաջադրված խնդիրների լուծման համար համապատասխան մեթոդների կիրառմանը, հետա-

զոտության երկարատևությամբ և բազմափուլային բնույթով, դպրոցականների մարզական ուղղվածության շարժողական պատրաստության հիմնավորված մեթոդիկայով, փաստացի նյութի մաքսատիկական անհրաժեշտ գործիքների կիրառմամբ:

Փորձաքննությունն ու արդյունքների ներդրումը: Հետազոտության արդյունքները 2010–2014 թվականների ընթացքում պարբերաբար գեկուցվել են Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ամենամյա գիտաժողովներում, Ուսուաստանում, Ուլուղություն ու Մոլորդություն կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսներում, հանրապետական և միջազգային այլ գիտաժողովներում: Հետազոտության տվյալները հրատարակվել են հանրապետական ու միջազգային գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների ժողովածուներում և գիտամեթոդական ամսագրերում: Մանկավարժական պրակտիկայում հետազոտության արդյունքների ներդրման վերաբերյալ աշխատանքուն առկա է 2 ակտ:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1. Դպրոցի միջին դասարաններում ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպումը մարզական ուղղվածությամբ աշակերտների շարժողական պատրաստականության բարելավման արդյունավետ ուղղություններից է:
2. 12–13 տարեկան երկու սերի դպրոցականների շարժողական պատրաստության գործընթացում վոլեյբոլ և բասկետբոլ մարզաձևների հիման վրա սպորտայնացված ֆիզիկական կուլտուրայի դասերը, ի համեմատ ավանդական դասերի առավել արդյունավետ են ներգործում աշակերտների շարժողական ընդունակությունների զարգացման վրա:
3. Շարժողական պարաստության մարզական ուղղվածության մեթոդիկայով կազմակերպված ֆիզիկական կուլտուրայի դասերը էականորեն բարելավում են երկու սերի դպրոցականների առողջական վիճակն ու անհատական բնութագրերի լայն շրջանակը:
4. Սպորտայնացված ֆիզիկական կուլտուրայի դասերի շարունակական բնույթը նպաստում է աշակերտների շարժողական ընդունակությունների կայուն զարգացմանը և ցուցանիշների հետաձի կանխարգելմանը:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 169 հանակարգչային էջի վրա, ընդգրկում է 11 այլուսակ, 8 գծապատկեր, 5 նկար, մանկավարժական պրակտիկայում հետազոտության արդյունքների ներդրման 2 ակտ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից ու 284 աղբյուր պարունակող օգտագործված մատենագիտական ցանկից, ինչպես նաև՝ 17 հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՐԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, բնութագրվում են աշխատանքի նպատակը, հետազոտության խնդիրները, գիտական վարկածը, հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանական հիմքը, հետազոտության արդյունքների հավաստիությունը, փորձաքննու-

թյունն ու արդյունքների ներդրումը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության «Հիմնախնդրի տեսական հայեցակետը» վերնագրով առաջին գլխում պարզաբանվել են դպրոցահասակ երեխաների օրգանիզմի մոդֆոֆունկցիոնալ փոփոխությունների առանձնահատկությունները, շարժողական ընդունակությունների տարիքային զարգացումը, դպրոցականների սպորտայնացված շարժողական պատրաստության հիմնախնդիրը, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի սպորտայնացման նախադրյալներն ու հնարավորությունները Դայաստանում:

Բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է աճող սերնդի առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստականության տարեցտարի վատրարացմանը, դպրոցական «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նկատմամբ հետաքրքրության նվազմամբ և այլն:

Մինչ այսօր տարբեր երկրներում տվյալ հիմնախնդրի լուծման ուղղությամբ իրականացվել են մի շարք հետազոտություններ: Որպես դպրոցում ֆիզիկական դաստիարակության բարեփոխումների առավել արդյունավետ նոտեցում՝ դրանցում ներկայացված է նարզական ուղղվածության (սպորտայնացված) ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպումը [Մ.Յ. Վալենսկի, Ե.Ն. Լիտվինով, 1990; Յ.Կ. Բալչևսկի, Լ.Ի. Լուբանավար, Լ.Ի. Պրոցոնյուկ և այլն, 2003; Հ.Ն. Կոստրովա, 2007; Յ.Ս. Շլյաշով, 2008 և այլք]:

Ուստարկվող մեթոդիկան ենթադրում է նարզական պատրաստության տարբերի, մրցումների և դրանց հետ կապված այլ կարևոր հայեցակետերի տեղափոխումը դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգ:

Ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացումը սպորտայնացման եղանակով ունի բազմաթիվ դրական կողմեր. երեխաներին ազատ ընտրություն կատարելու, ինչպես նաև ինքնարտահայտվելու հնարավորություն է ընձեռվում: Վերջինս հատկապես կարևորվում է նոր ժամանակների մանկավարժության մեջ, քանզի հումանիստական մոտեցման դեպքում գործունեության կարևոր օղակ է հանդիսանում անձը, նրա ազատ ընտրության իրավունքի հանգանանքը, ինչպես նաև նրա մոտ ուսուցման դրդապատճառների ձևավորումը: Ընդ որում երեխաների ներդաշնակ ֆիզիկական զարգացման համար պետք է հնարավորություն տալ ուսումնական տարրական մեկ անգամ փոխել նարզածնը:

Մեր երկրում նույնական կան նմանօրինակ սակավաթիվ փորձեր, երբ ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է այս եղանակով՝ նասնավորապես սեկցիոն, արտադասարանական պարապմունքների միջոցով: Սակայն, այդ գործնքացն այսօր գտնվում է սկզբնական ծևավորման փուլում, և բազմաթիվ հարցերի պատասխաների կարիք է զգացվում:

«Դաստիարակության մեթոդաբանություն» վերնագրով աշխատանքի երկրորդ գլխում շարադրված են հետազոտության նպատակը, խնդիրներն ու մեթոդներ՝ գրական աղյուսների ուսումնականությունը, վերլուծությունը և ընդհանրացումը, ուսումնական փաստաթղթերի և ծրագրերի ուսումնասիրությունը, անկետային հարցում, զրույց, մանկավարժական դիտումներ, մանկավարժական թեստավորություն, դիմանմետրիա, պուլսոմետրիա, մանկավարժական գիտափորձ, մաթենատիկական վիճակագրություն: Աստենախոսության սույն գլխում նկարագրվում են իրականացված մանկավարժական դիտումները և թեստավորությունը, ինչպես նաև ներկայացված է հետազոտության կազմակերպումն ու քանակակազմը:

Հետազոտությանը մասնակցող դպրոցականների շարժողական պատրաստության բարելավման վրա վոլեյբոլի և բասկետբոլի ուղղվածության պարապմունքների ներգործության արդյունավետությունը ստուգելու նպատակով անց է կացվել հետազոտվողների յոթ շարժողական ընդունակությունների թեստավորում: Այդ նպատակով մեր կողմից ընտրվել և օգտագործվել են հետևյալ թեստային վարժությունները՝ 5 համակենտրոն շրջաններով թիրախին (1x1 մ) թենիսի զնդակի նետում (շարժումների նպատակային ճշգրտություն), մաքրավագք՝ 3x10 մ (արագային դիմացկունություն), վագք. աղջիկներ՝ 500 մ, տղաներ՝ 1000 մ (ընդհանուր դիմացկունություն), արագավագք՝ 30 մ (արագաշարժություն), դաստակի ուժաչափ (դաստակի առավելագույն մկանային ուժ, դաստակի մկանային ճիգերի տարերակման ճշգրտություն), ինչպես նաև՝ տեղից հեռացատկ (արագառնային ընդունակություն):

«Դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկայի հիմունքները» վերնագրով երրորդ գլխում քննարկվել և վերլուծվել են ֆիզիկական դաստիարակության վիճակն ու կազմակերպման հեռանկարները Երևան քաղաքի դպրոցներում, ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացված դասերի կազմակերպման հայրենական և արտասահմանյան փորձի, ինչպես նաև տարբեր մարզաձևերի ուղղվածության 12–13 տարեկան դպրոցականների շարժողական պատրաստության մեթոդիկային (ձևավորող մանկավարժական գիտափորձեր), դպրոցականների մարզական ուղղվածության դասերի ֆիզիոլոգիական բեռնվածության ու դպրոցականների տարբեր անհատական բնուրագրերի վրա նորարարական մեթոդիկայի ներգործության վերաբերյալ հարցերին:

Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներում 2009–2010 ուսումնական տարում ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների մանկավարժական պրակտիկական դեկավարող մեթոդիստների, դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, ինչպես նաև երկու սերի դպրոցականների շրջանում մեր կողմից անցկացված անկետային հարցման արդյունքում բացահայտվեց, որ ներկայիս ֆիզիկական կուլտուրայի դասերը չեն ապահովում Երեխաների շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալը, և, հետևաբար, չեն նպաստում նրանց շարժողական ընդունակությունների բարելավմանը:

«Արդյո՞ք հաճույքով եք մասնակցում ֆիզիկական կուլտուրայի դասերին» հարցին միջին և ավագ դպրոցականների մեծամասնությունը՝ 72,1% և 53,1%, հայտնել էին իրենց դրական կարծիքը:


Հատկանշական է, որ ֆիզիկական դաստիարակության ավանդական պարապմունքները գոհացնում են հասկացեած երկու սերի միջին դպրոցականների մեծամասնությամբ: Սա, հավանաբար, կապված է նրանց վրա դասերի ընթացքում տարբեր վարժությունների ու մարզախաղերի դրական հուզական ազդեցությամբ, ինչպես նաև՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ ավելի խորը և մտերսիկ հաղորդակցման հանգանածքով: Սակայն այս ամենը բնավ չի ենթադրում դասի կրթական ու դաստիարակչական խնդիրների արդյունավետ իրականացում և դպրոցականների շարժողական պատրաստականության մակարդակի բարելավում:

Ինչ վերաբերում է մեթոդիստների պատասխաններին այս հարցին, ապա նրանց 78,9%–ին չի բավարարում դպրոցում ներկայիս ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման ծավալը, իսկ 18,4%–ին այն մասամբ է բավարարում: Հարցվող-

Աերից միայն մեկն է դրական պատասխանել այս հարցին: Ուսուցիչների մեծ մասին նույնական չի գոհացնում դասի անցկացման ներկային ծևզ՝ 63,5%:

Կարևոր է նշել, որ Երկու սեռի միջին և ավագ դպրոցականների մեծամասնությունը՝ 76,1 և 79%-ը, գերադասում է ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպումն առավելապես իրենց նախընտրած մարզաձևի հիման վրա:

Վերջիններիս հետ համակարծիք է ուսուցիչների մեծ մասը՝ 71,2 և մերողների 44,7%-ը, որոնք նպատակահարմար են համարում շարժողական պատրաստության գործընթացը կազմակերպել աշակերտներին հետաքրքրող մարզաձևերի հիման վրա (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ուսապոնդենտների կարծիքները մարզական ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպման նպատակահարմարության վերաբերյալ

Այս առումով տվյալ տարիքային խմբերի դպրոցականների մեծ մասը ցանկանում է հաճախել տվյալ տեխնոլոգիայով ֆիզիկական կուլտուրայի դասերին շաբաթական 3 դասաժամով:

Նման հաճախականությամբ մարզումների կազմակերպմանն են կողմնակից նաև ռուս մասնագետները [Լ.Ի. Լյուծան, 2009 և այլք]:

Մեթոդիստների շրջանում մեր կողմից անցկացված հարցման ընթացքում պարզվեց, որ Երևան քաղաքի առնվազն 30 դպրոցներուն հնարավոր է կազմակերպել ֆիզիկական կուլտուրայի դասերը հետևյալ մարզաձևերի հիման վրա՝ բասկետբոլ՝ 86,6%, վոլեյբոլ՝ 76,3%, ֆուտբոլ՝ 60,5%, հանդբոլ՝ 31,6%, լող՝ 5,3%, ըմբշամառ՝ 18,4%: Հարցվածների 15,8%-ի կարծիքով այդ դպրոցներում կարելի է կազմակերպել նաև կարտաեի, շախմատի, մարմնամարզության, արետիկայի և աերոբիկայի պարագնունքներ: Ներկայունս դպրոցում ֆիզիկական կուլտուրայի դասերը հնարավոր է կազմակերպել առավելապես վոլեյբոլի (94,2%) և բասկետբոլի (92,3%) ուղղվածությամբ:


Ինչ վերաբերում է մարզական ուղղվածության ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետությունն ապահովող կադրային ներուժի պատրաստությանը, ապա նշենք, որ դա բավականին բարդ է ներկայիս ՀՀ ֆիզիկուլտուրային բարձրագույն կրթության ոլորտում: Հաշվի առնելով Երևան քաղաքի դպրոցների նյութատեխնիկական ապահովածությունը, ենթադրում ենք, որ Հայաստանում բարձրագույն ֆիզիկուլտուրային կրթությունը պետք է ընթանառաջին հերթին հենց այդ մարզաձևերի հիման վրա՝ դպրոցականների մարզա-

կամ ուղղվածության ֆիզիկական դաստիարակության գործընթացն իրականացնող մասնագետների պատրաստության ուղղությամբ: Այս տեսանկյունից արդեն իսկ գործող մասնագետներին անհրաժեշտ է ներգրավվել համապատասխան վերապատրաստման դասընթացներում, ինչը թույլ կտա դպրոցում արդյունավետ կազմակերպել սպորտայնացված ֆիզիկական կուլտուրայի դասերը:

Մարզական ուղղվածության ֆիզիկական դաստիարակության կազմակերպումը դպրոցներում կօգնի նաև մարզական կողմնորոշման խնդիրների արդյունավետ լուծմանը, ինչպես նաև՝ մարզական պատրաստության և ընտրված մարզաձևերի վերաբերյալ տեսական գիտելիքների յուրացմանը: Միևնույն ժամանակ կմեծանա աշակերտների հետաքրքրությունը դասերի նկատմանը, կրարելավվեն դասերի հաճախումները, ինչը, ընդհանուր առմանք, դրականորեն կանորադառն շարժողական ընդունակությունների զարգացման վրա:

Ներկայիս և նախընտրած մարզաձևի հիմնա վրա կազմակերպված ֆիզիկական կուլտուրայի դասերի առավելություններն ու թույլ կողմները, դրանց ներգործության համեմատական արդյունավետությունը բացահայտելու նպատակով 2010–2011 ուսումնական տարում մենք ուսումնասիրել ենք դպրոցականների մարզական ուղղվածության ֆիզիկական դաստիարակության հայրենական և արտասահմանյան փորձը, ինչպես նաև մասնակցել ենք գործնական–ուսուցողական պարապնունքներին:

Առկա հայրենական և հարուստ արտասահմանյան փորձի ուսումնասիրնան արդյունքում բացահայտված տվյալները հիմք հանդիսացան ձևավորող մանկավարժական գիտափորձերի կազմակերպման համար և թույլ տվեց նախանշել դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկայի ներգործության 3 հիմնական ոլորտները (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Դպրոցականների սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության ներգործության ուղղությունները

Պարապմունքներն արդյունավետ պլանավորելու և կազմակերպելու նախատեսվող ուսումնասիրել ենք նաև ծրագրանորմատիվային փաստաթղթեր, ինչպես նաև՝ նմանատիպ աշխատանքների կազմակերպման արտասահմանյան փորձը:

Մանկապատանեկան մարզադպրոցներում ներկայում գործող վոլեյբոլի և բասկետբոլի մարզական պատրաստության, ինչպես նաև այդ մարզաձևերի ուղղվածությամբ դպրոցականների ֆիզիկական ռաստիարակության արտասահմանյան օրինակելի ծրագրերի հիման վրա [Լ.Ի. Պրօցոնօք, 2001; A.H. Կանօն, H.B. Կոլասկանա, 2005 և այլք] մշակել ենք 7-րդ դասարանի աշակերտների վոլեյբոլի ու բասկետբոլի ուղղվածության պարապմունքների տարեկան թեմատիկ պլան-գրաֆիկներ՝ 102 դասաժամով:

Տարեկան թեմատիկ պլան-գրաֆիկները բաղկացած էին 6 դասաժամ տեսական (6%) և 96 գործնական պարապմունքներից (94%): Ըստ օգտագործվող վարժությունների բնույթի՝ դրանց հարաբերակցությունը երկու փորձարարական խմբերում ուներ հետևյալ պատճեր՝ ցիկլիկ (30%), ացիկլիկ (30%) և խառը (40%) բնույթի վարժություններ: Տեսական դասերը վերաբերում էին համապատասխան մարզաձևի զարգացման պատմությանը, մրցումների կանոններին, ինչպես նաև՝ օրգանիզմի վրա ընդհանուր ու հատուկ ֆիզիկական վարժությունների ներգործության առանձնահատկություններին:

Ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացված դասերի ներգործության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով 2011–2012 ուսումնական տարվա ընթացքում երևան քաղաքի դպրոցներում կազմակերպվեցին ձևավորող մանկավարժական գիտափորձեր՝ երկու փորձարարական և մեկ ստուգողական խմբերի մասնակցությամբ: Այստեղ կարևոր է նշել, որ փորձարարական խմբերը ձևավորելիս մեր կողմից ընտրվել են այնպիսի դասարաններ, որտեղ բոլոր երեխաները մի դեպքում ցանկանում էին հաճախել վոլեյբոլի (Փու1), իսկ նյուսում՝ բասկետբոլի (Փու2) ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի, այլ կերպ ասած՝ փորձարարական խմբերի դպրոցականների կողմից վոլեյբոլ կամ բասկետբոլ մարզաձևերի ընտրությունը կատարվել է կամավոր: Այս հանգամանքը մասնագետները համարում են ֆիզիկական կուլտուրայի սպորտայնացված դասերի կազմակերպման կարևոր կողմներից մեկը:

Ստուգողական խմբի դպրոցականները հետազոտության ընթացքում մասնակցում էին ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերին՝ շաբաթական 3 դասաժամով՝ յուրաքանչյուրը 45 րոպե տևողությամբ: Առաջին փորձարարական խմբում ընդունված դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի դասերը վոլեյբոլի, իսկ երկրորդին՝ բասկետբոլի ուղղվածության էին: Նշենք, որ շաբաթվա ու տարվա կտրվածքով, ստուգողական և փորձարարական խմբերում դասաժամների քանակն ու տևողությունը միանման էին:

Դպրոցականների շարժողական պատրաստության բարելավման վրա վոլեյբոլի և բասկետբոլի ուղղվածության պարապմունքների ներգործության արդյունավետությունն ու ուղղությունները բացահայտելու նպատակով, մինչ գիտափորձերը սկսելը, և գիտափորձերից հետո անց է կացվել հետազոտվողների յոթ շարժողական ընդունակությունների թեստավորում:


Մեկանյա գիտափորձերի արդյունքների վերլուծությունը բացահայտեց, որ վոլեյբոլի և բասկետբոլի պարապմունքները դրական ազդեցություն են ունեցել դպրոցականների յոթ շարժողական ընդունակությունների վրա:

Տվյալ մեթոդիկայով 12–13 տարեկան դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործնթաքի կազմակերպման արդյունքում բարելավվել են ուսումնասիրվող 7 շարժողական ընդունակություններից վոլեյբոլի և բասկետբոլի

ուղղվածության դասերին հաճախող տղաների մոտ՝ 4 և 6, իսկ աղջկների մոտ՝ բոլոր յոթ ընդունակությունները:

Մարզական ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի ներգործության ամբողջական պատկերը պարզելու և ստուգողական խնդիր հետ համեմատելու նպատակով մինչ գիտափորձերն ու գիտափորձերից հետո թեստավորման արդյունքում արձանագրված յուրաքանչյուր աշակերտի տարբեր ցուցանիշները (վրկ, ռոպե/վրկ, կգ, սմ) վեր են ածվել միավորների՝ 0–10 սահմաններում հետևյալ ձևով: Յուրաքանչյուր թեստի լավագույն արդյունքը գնահատվել է առավելագույն 10, իսկ ամենավատը՝ 0 միավորով: Միավորների հաշվարկման քայլն որոշվել է բաժանելով լավագույն ու վատագույն արդյունքների տարբերությունը 10-ի: Ընդ որում յուրաքանչյուր թեստի լավագույն և վատագույն արդյունքներն ընտրվել են գիտափորձերից առաջ ու հետո բոլոր խնդերում ցույց տրված տվյալների հիման վրա: Դաշվի առնելով խնդերի քանակակազմի տարբերությունը, ընդհանուր միավորները բաժանվել են յուրաքանչյուր խնդիր աշակերտների քանակի վրա: Դաշվարկներն իրականացվել են ըստ սեռային պատկանելիության:

Դաշվարկման արդյունքում ստացված համընդհանուր միավորների փոփոխությունը ներկայացված է գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Դարպոցականների շարժողական պատրաստականության մակարդակի փոփոխությունը գիտափորձների ընթացքում (միավորներ)

Մինչ գիտափորձերն իրականացնելը բոլոր խնդերի երեխաների շարժողական պատրաստականության մակարդակներն ըստ միավորային ցուցանիշների, գրեթե միանձնան էն, ինչը վկայում է դպրոցականների ելակետային գրեթե միևնույն վիճակի մասին:

Այսպես, փորձարարական և ստուգողական խնդերի տղաների ցուցանիշների միջև տարբերությունը կազմում է 4 և 6, իսկ աղջկների մոտ՝ ընդամենը 1 և 3 միավոր: Սակայն հետազոտության վերջում այդ պատկերը կտրուկ փոխվեց: Այստեղ ՓԽ1 (վոլեյբոլ) տղաների և ՓԽ2 (բասկետբոլ) աղջկների շարժողական պատրաստականության մակարդակը 9 և 11 միավորով ավելի բարձր էր Մի-ի տվյալներից: Այստեղ առավել մեծ էր տարբերությունը ՓԽ2-ի և Մի-ի տղաների ցուցանիշների միջև՝ 14 միավոր: Ինչ վերաբերում է աղջկների ամենաբարձր ցուցանիշին, ապա այն արձանագրվել է ՓԽ1-ում, որի ցուցանիշ-

ները բարձր էին Սիս-ի աղջիկների համընդիանուր արդյունքից նույնպես 14 միավորով:

